

աստուածութեանն լուսով, տեսիչ եղեւ ի բնութիւնս կեղտոյ եւ արկածից թշնամույն վասն որոյ՝ ինքն, որ անաղտ էր իբրեւ զաչս, ցուցանէր զայլ անդամոցս աղտն, եւ ասէր հայր՝ մեղայ յերկինս եւ առաջի քոյ: Եւ զի աղօթէր նա առ հայր, ուսանիմք յաւետարանչացն, զի հանէր զգիշերն ի գլուխ յազօթսն Աստուծոյ ոչ յիւր պէտս՝ այլ և մերն¹:

(Շարուճակնիշ.)

Հ. Հ. ՈՍԿԵԱՆ



ԷԶՄԻԾԺՆԻ ՄԱՏԵՆԱԴՐԱՅՆԻ ԻՄԵՍՑԱ- ՈՒՐԵԿԵՆ ՀՆԵԳՈՅՆ ԶԵՄԵԳԻՐՆԵՐԼ

Թ. 1890, 14 էջմ. Մատ. = Մայր Ցուցակ,
թ. 1848:

Թուղթք՝ 123: — Մեծութիւն՝ 12,5 × 8,5 սմ.: — Տողք՝ 19—20: — Նիւթ՝ որորի հաստ թուղթ: — Գիր՝ բոլորգիր: — Կազմ՝ կաշեպատ տախտակ, կազմի վրայ կապիչների հետքեր: — Հանգամանք՝ թուղթը խոնաւութիւնից վնասուած. սկիզբէն մի քանի թերթ պակաս է եղել, թերի մասը յետոյ լրացրած բարակ թերթերի վրայ բոլոր գրով (թ. 2 եւ 3): — Թուական՝ ՈՂԲ = 1243: — Գրիչ՝ Յովհաննէս քահանայ: — Ստացող՝ Պետրոս՝ սպասաւոր սուրբ Նշանի Հաղբատայ: — Տեղ՝ «ընդ հովանեաւ սուրբ Նշանիս Հաղբատայ»:

Բովանդութիւն.

1. Դաւթի փիլիսոփայի ներդինացոյ առաջաբանուի սհմոց իմաստասիրուեն (էջ 2 ա—119 բ, պրակլք Ա—ի Գ):

Էջ 119 բ վերջք. Արդ այսոցիկ այսուէս ելոց չնորհեաց Ած զիմաստասիրութի վն զարդարելոց զմարդկաինս հոգի: Այդ զգիտական զարդարութիս զարդարէ ի ձեռն տեսականին իսկ զկենդանականս ի ձեռն զործականին որպէս զի մի զսուտ զիտութի ի կարծեաց ընկալցուք եւ մի չար ինչ զործեացուք:

Ընդ այսուիկ եւ առաջիկա բանք իմաստասիրութե:

¹ Հոս կը մերջանայ խորհրդածութեան հետ եղած նման... թիւնը:

Դաւթի մեծի եւ անյաղթ փիլիսոփայի ընդդէմ առարկութեցն չորից Պիհուռնի իմաստակի եւ սահմանք եւ տրամատութիք իմաստասիրութե:

Հնագոյն այս ձեռագրում՝ թէ գլուխների բաժանումը եւ թէ բնագիրը տեղ տեղ տարրեր են 1833 թուին Վենետիկում հրատարակածից:

2. Էջ 119 բ—121 ա. Ամենայն չար տանջելի. ոչ ոք տանջեալ անպական...

Վերջ. Եւ ընդ բամբասանաւք է սատանա ապա ուրեմն ոչ է անեղ:

Այս գծածք հանդիսաղիր խմբի յառաջադրյն տառից տրամախոհ իմաստասէր մակացու արանց ի Դաւթէ եռամեծէ ենթադրեցաւ:

Յիշատակագրութիւնք.

1. Էջ 48 բ ներքեւի լուսանցքի վրայ նոյն դրչէ.

Զածաշնորհ եւ զպատուական վարդուպետն Պետրոս յիշեցէք յաղաւթս ընդ...:

2. Էջ 121 ա—122 բ ձեռագրի գլուխուրիշատակարան նոյն դրչէ.

Փառք ամենասր երրորդութեն Հաւը եւ Որդոյ եւ Հոգւոյն սրբոյ այժմ եւ միշտ եւ յաւետեանս յաւիտենից ամէն:

Զահմանաց զգիրս զոր արարեալ է մեծ փիլիսոփայն Դաւիթ ընդդէմ հակառակողացն որք կամեցան բառնաւ զիմաստասիրութին Ակաղիմեանցն Պիհուռնի եւ ձեմականացն խաղաղացոյց զնոսա ի խոռվութենէն եւ ասաց եթէ զոյ իմաստասիրութի եւ է եւ ճմարիտ է եւ զաւրինակս առ մեզ հաստեաց Հայաստանեայս :

Որոյ ես ծեր ոմն Պետրոս սպասաւո՞ւ սր նշանիս Հաղբատայ բաղձանաւք սիրոյ ետու գրել Յոհաննիսի կրաւնաւոր քահանաի իմով արդեամբք առ ի յուսումն մակացո՞ւց:

Այդ որք աւզտիք ի սմանէ յիշեցէք ի սրբամատոյց յաղաւթս ծեր զիս զմեղաւո՞ւ Պետրոս եւ Ած զձեղ յիշեցէ ի բարի եւ կատարման սորա ասացէք զերանի ում թութի եղեւ մեզաց եւ զՔս որդի Այ:

Գրեցաւ զիրքս ընդ հովանեաւ սր նշանիս Հաղբատայ, ի թուիս ՈՂԲ եւ աւանդեցաւ սմա. մի ոք իշխեցէ հանել զսա ասոմի կազմեցաւ եւ ձեռամբ իմով Պետրոսի:

Թ. 1943, 5 էջը. Մատ. = Մայր Ցուցակ,
թ. 1901:

Թուղթք՝ 251: — Գրութիւն՝ 13×8
սմ.: — Տողք՝ 21: — Նիւթ՝ ողորկ հաստ
թուղթ: — Գիր՝ բոլորգիր. վերնագրերն ու
սկզբնատառերը կազմիր թանաքով: — Լու-
սանցաղարդք՝ էջ 1 ա՝ խորան ու զարդա-
նկար, էջ 141 ա՝ զարդանկար: — Կազմ՝ կա-
շեցատ տախտակ. կապիչներից մնացել են
միայն հետքեր կազմի վրայ: — Մազաղա-
թեայ պահպանակ՝ սկիզբէն եւ վերջէն երկ-
երկու թերթ. մազաղաթեայ երկաթագիր
Աւետարանի մնացորդ: — Հանգստանք՝ լաւ:
— Թուական՝ ԶԴ = 1255:

Բովանդակութիւն.

1. Էջ 1 ա—139 բ. Ստորոգութիւն Արիս-
տոտէլի որ կոչի յունարէն կատիղորիս:

Արիստոտէլի Ստորոգութեանց բնագրի
ամէն մի հատուածին կամ պրակին հետե-
ւում է նոյն հատուածի կամ պրակի մեկնու-
թիւնը «մեկնիչ» վերնագրի տակ:

1833 թուի Վենետիկեան հրատարակու-
թեան մէջ Ստորոգութեանց մեկնութեան
սկիզբը պակաս է: Տես էջ 409 ծանօթու-
թիւն՝ «Ձկիսամասնեայ մնացուած մեկնու-
թեան Ստորոգութեան Արիստոտէլի իմիոյ եւեթ
թերակատար օրինակէ, որ առձեռն գտաւ,
յարեմք աստանօր կարօտք անթերի օրինա-
կաց»: Սոյն հնագոյն անթերի օրինակում
Վենետիկի տպագիր հրատարակութեան բաց
թողած մասը կազմում է էջ 1 ա—89 ա:

Սկիզբ էջ 1 ա. Հոմանունք ասին՝ որոց
անուանք միայն հասարակ, իսկ ըստ անուանն
բան գոյացութեանն այլ. որզան՝ կենդանի՝
մարդն եւ գրեալն: Քանզի սոցա անուն մի-
այն հասարակ, իսկ ըստ անուանն բան գոյա-
ցութեանն այլ: Քանզի Եթէ բացատրեացէ
ոք՝ զինչ է նոցա իւրաքանչիւր ուրուք կեն-
դանին զոլ, յատուկ իւրաքանչիւր ումեք
բան բացատրեացէ: — Մեկնիչ:

Հոմանունութիւն լինի ըստ երկուս յե-
ղանակն՝ ըստ պատահման կամ մտածու-
թեան, մտածութիւնն ըստ պատույ, ըստ
յեղինակի, ըստ յուսոյ, ըստ աղաւթից, ըստ
կերպարանի, ըստ նմանութեան. իսկ միայն
երբեւ զարեգան միանձն. կամ ըստ Ծոր-
դին պակասութեան որպէս միաձորձ կամ
որպէս նահատակ:

Վերջ՝ էջ 139 բ. Եւ այսուիկ եղիցի զյո-
ւովից եւ զտարբերեցելոց ի միմեանց տեսա-
կաց ստորագեալ ունելու. որպէս զի եղիցի
սեռ՝ ընդունելով զահման սեռի. քանզի էր
սահման սեռին որպէս ասացաւ. զյուովիցն
եւ զտարբերեցելոց տեսակաւ ի ներում զին-
չին ստորոգեալ:

Կատարեցաւ գիրք Ստորոգութեանցն
ասացեալ եռամեծին Արիստոտէլի հաւատա-
րիմ վարդապետի եւ ուղղափառ իմաստա-
սիրի, զոր վցուն մատամբ գրեցի:

2. Էջ 141 ա—251 ա. Յաղագս մեկնու-
թեան, որ կոչի Պերիարմէնիաս, ասացեալ
Արիստոտէլի:

Այս վերնագրի վրայ նօտր գրով եւ ու-
րիշ թանաքով գրուած կայ մի այլ վերնա-
գիր, որը սովորական է նորագոյն ժամա-
նակների օրինակներում.

Սկիզբն եւ նախաղասութիւն (^(օ)) գրոցն որ
ասի ըստ յունաց Պերիարմէնիաս եւ հայե-
րէն՝ յլդս մեկնուե: Արտագրեալ ի մեծ ի-
մաստնոյն Արիստոտէլէ, թարգմանեալ եւ
մեկնեալ ի Դաւթայ ներդինացւոյ:

Սկիզբ էջ 141 ա. Նախ արժան է դնել,
զի՞նչ է անուն եւ զի՞նչ բայ, ապա զի՞նչ է
բացատրեին, եւ ստորասութիւն, եւ բացե-
րեւութիւն, եւ բան:

Ճառեցաւ մեղ երբեմն, եթէ է ամենայն
բանական իրողութեանս այսորիկ ակնկալու-
թիւն առ ապացուցական շարաբանութիւնսն
հասանել. այլ վս զի բազում պատրանք ըն
շարաբանութիւնսն լինի, հարկաւոր է զիւ-
րաքանչիւր ոք նոցա գիտել:

«Յաղագս մեկնութեան» բնագրի ամէն
մի պրակին հետեւում է նոյն պրակի մեկ-
նութիւնը:

Վենետիկի տպագիր հրատարակութեան
մէջ պակաս է 15 յլուս: Տես էջ 512 ծանօ-
թիւն. «Յօրինարկին պակասեն թուղթք
քան եւ երեք»: Անթերի այս ձեռագրում
Վենետիկեան տպագրի բաց թողած մասը
բոնում է էջ 165 ա—205 բ:

Յիշատակագրութիւն:

1. Էջ 251 ա ձեռագրիս վերջում յիշա-
տակարան նոյն գրչէ.

Փառք որ Երրորդութեան կատարե-
լոյ եւ միոյ. ԶԴ գրեցաւ ի թուականիս:

2. Հետեւեալ զատարկ երեսի վրայ նօտր
գրով այլ գրչէ.

ի վայելումն Մելքիսէդ վրապին ի գառն եւ
ի նեղ ժմն բելին :

Կիբք՝ Քի Ծռ Գրիգոր վրդպատ ՌՄԼԳ :

Ի վայելումն Ղազար վրդպին եւ ի յիշա-
տակ իմոյ անձին ի ՅՄԽԶ թուին եւ
յնվրի ԺԵ-ին ի Կարին :

Թ. 1889, Հ Էջմ. Մատեն. = Մայր Յուցակ,
Թ. 1847:

Թուղթք՝ 345: — Գրութիւն՝ 14×10
սմ: — Տողք՝ 25: — Նիւթ՝ ողորկ հաստ
թուղթ: — Գիր՝ բոլորդիր. Լուսանըների
վրայ մեկնութիւններ նօտր դրով. նորո-
գուած թերթերը 73 եւ 74 նոյնական նօտր
դրով: Վերնագրերը, սկզբնատողերն ու սկզ-
բնատուերը կարմիր թանաքով: — Լուսան-
ցաղարք՝ խորաններն էջ 1ա, 75 ա, 181 ա
խորացած: — Կաղմ՝ կաշեպատ տախտակ
առանց կապիչների: — Մաղաղաթեայ պահ-
պանակ՝ սկզբէն եւ վերջէն մէկ մէկ թերթ.
Մամբրէ վերծանողի ճառից ի մէծի աւուր
դալստեան տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի
յերուսաղէմ: — Հանգամանք՝ տեղ տեղ
դրեն աւրուած. 73 եւ 74 թերթերը կցուած
են ձեռագրին 1410 թուականին. նորոգուած
թերթերի վրայ Յակոբ Ղրիմեցու ձեռքով
գուած են Ներսէս Շնորհալու «Ամենայն
գալարա» հատուածի մեկնութեան թե-
չար տանջելի» հատուածի մեկնութեան թե-
չար մասերը: — Թուական՝ ԶիԵ = 1276: —
Գրիչ՝ Ստեփաննոս քահանայ:

Բովանդակութիւն.

1. Դաւթի Փիլիսոփա Ներգինացոյ,
Յառաջաբանք Սահմանաց իմաստասիրու-
թեան (էջ 1ա—65 ա, պրակք Ա-իԱ):

Սկզբն է (էջ 1ա). Որք միանդամ ի-
մաստասիրութեան տեսչան բանից եւ առ ի
նմանէն [Հեշտ] ութեանց ծայրիւ միայն մա-
տին հանդիպին ճաշակեալք, ամենայն կեն-
ցաղական հոդ[ոց] բարեաւ մնալ ասացեալք,
ողջախոհ իմն [մոլու]թեամբ առ այսոսիկ
գարեալք բերին:

Վերջ (էջ 65 ա). Արդ զդիտական զաւ-
րութիւնն զարդարէ ի ձեռն տեսականին, իսկ
զիենդանականսն ի ձեռն գործականին, որ-
պէս զի զուտ զիտութիւն ի կարեաց ընկալ-
ցուք, զի մի չար ինչ գործեացուք:

Ընդ այսոսիկ եւ առաջաբանք իմաստա-
սիրութեան: Դաւթի մէծի եւ անյաղթ փի-
լիստիքայի ընդդէմ, առարկութեանցն չորից

Պիւռհոնի իմաստակի եւ սահմանք եւ տրա-
մասութիւնք իմաստասիրութեան:

2. Էջ 65 ա—65 բ. Ամենայն չար տան-
ջելի, ոչ ոք տանջեալ անապական, ոչ ոք
ապականացու անեղ. է չար ապականացու.
չար ուրեմն ոչ է անեղ եւն: Վերջ (65 բ).
Եւ ընդ բամբասանաւք է սատանայ, ապա-
ուրեմն՝ ոչ է անեղ:

Այս գծածք հանդիսաղիր խմբոց առաջ-
նոցն տառից տրամախոն իմաստակի մա-
կացու արանց ներբողեալ ի Դաւթէ Եռա-
մւծէ ևնթաղբեցաւ:

3. Էջ 65 բ—74 բ. Մեկնութիւն բանից
Դաւթի Փիլիսոփայի, որ է ի կատարումն
նորին տառի որ վերին սահմանացն իմաս-
տութեան, ասացեալ ներսէսի եղբայր կաթ.
Հայոց Գրիգորիսի ուրումն՝ սիրողի իմաս-
տութեան:

Ակիզր (էջ 65 բ). Զինդիր հոգեւորա-
կան հաւատով եւ սիրով հայցողաց պարտ է
տալ յաւժարութեամբ ըստ հրամանին
Տն՝ թէ որ ինդրէ ի քէն տուր: Վերջ (էջ
74 բ). Այլ մեք զի ունիմք զայսորիկ շնոր-
հեալ յԱյ գերազոյն քան զանմարմնոցն յառ-
նել ի մեռելուենէ հոգոց խոստովանուր եւ
ապաշխարուր եւ Քի Այ յուսոյն մերոյ եւ
երկրպագւի յաւիտեանս ամէն:

4. 75 ա—89 ա. — Ներածութիւն Պոլ-
ֆիւրի իմաստասիրի:

Լուսանցքների վրայ. ծանօթութիւններ՝
բոլոր գրով բայց այլ գրչէ: Սկիզբն է (էջ
75 ա). Ելոյր հարկաւորի, Քրիստորիէ, եւ
յառա Արիստոտէլի Ստորոգութեցն վարդա-
պետեւթի, զիտել՝ զի՞նչ սեռ եւ զի՞նչ տալ-
րերութի, զի՞նչ տեսակ, զի՞նչ յատուկ եւ
զի՞նչ պատահումն եւ ի սահմանացն բացա-
տրութի...

Վերջ (էջ 89 ա). բայց են եւ այլք հա-
սարակութիք եւ յատկութիք ասացելոցն՝
այլ չատ են եւ սոքայ ի մեկնութի նոցայ՝
ի հասարակութե յանդիմակացութի:

5. Էջ 98 ա—157 բ. Դաւթի Փիլիսոփայի Ներ-
գինեցոյ, Վերլուծթի ի Ներածութի Պորփիւ-
րի (պրակք ա-իթ + Յաղագս հանդերձանալու)
սեռից եւ տարրերութից):

Լուսանցքների վրայ նօտր գրով միկ’
նութիւններ եւ նկատողութիւններ:

Ակիզրն է (էջ ») ա). Հանդերձանալ
հանդերձ Ավ սկիզբն առնել առաջիկայ շո-

րագրութես, զսովորականն պատմողաց խնդրել զգութիս ը գոլ թուով խնդրեսցուք:

Վերջ (էջ 157 ր). Եթէ յատուկն հակադարձի տեսակի, իսկ պատահումն ոչ երբեք:

6. էջ 158 ր—175 ր. Արիստոտելի իմաստասիրի թուղթ առ Աղէքսանդրոս թգր, Պատմութիւն յաղագս աշխարհի:

Սկիզբն է (էջ 158 ր). Իսկ բազում անդամ ինձ ածային ինչ եւ բարեբախտեալ ճշմարտապէս իր, ո՞վ Աղէքսանդրէ, գոլ թուցաւ իմաստասիրութիւն: Վերջ (էջ 175 ր). Սակա իրաւացն պակասելոյ՝ յԱյ պատուհասին, նոյնպէս եւ որ հանդերձեալն է բարեբասափիլ լինել եւ երանելի՝ ի նմանէ ընդունի զշնորհս:

7. էջ 175 ր. Ստագիրացի էր Արիտ ի Թիւրակայ ի Քաղկիթ գաւառէ մերձ ի Յաւշինթոս, որդի հաւր Նիկոմաքոսի եւ մաւրն Պեռիսդիաղայ¹: Եւ ամբառնա ազդ նորա ի հաւրէ եւ ի մաւրէ յԱսկեպիայ: Քսան ամս աշակերտեալ Պղատոնի ըստ որում թէ դէպ ուրեք լինէր չգալ նմա ի լսարանն՝ զայսպիսիս աղաղակ [էր] բանս Պղատոն. միտն չեկն այսր, ի բացեայ է սիրողն ճմարտութե, խուլ է լսարանս: Վաղձանի ի Քաղկիթ ամաց կ եւ եից. առասպելաբանի եթէ յոսկերս նորաց գտաւ պարս մեղուաց: Հանեալ զոսկերս նորա Ստագիրացւոցն ի Քաղկիթայ՝ տարան թաղեցին ի տեղուցն Արիստոտէլիկոսի:

Շարունակութիւնը էջ 18* ր. Սայ սկիզբն աշխարհի՝ տեսակ, նիւթ, պակասութի, տարերք դ եւ ե երրորդ արփի: Պղատոն ասէ՝ աշխարհս է յերկնէ եւ յերկրէ եւ որ ի նոսարնութիք բաղկացեալ, ի հրոյ եւ յերկրէ, յաւդոյ եւ ի ջրոյ եւ յասծոց եւ ի դիւաց եւ ի մարդկան է եւ ի կենդանեաց եւ ի տնկոց եւ ի նիւթոյ: Մովսէս մարգարէ՝ զանուունդս եւ զիսաւար եւ զջուր գոլ սկիզբն աշխարհի: Պիթաղորաս Մնեսարքայ որդին՝ զթիւս եւ զշափարերութիս եւ զյարմարութիս: Յաղաւ մարդկասիրութե ասաց Հոմերոս. Ածքն աւտարաց նմանեալ այլաքաղաքացեաց ըլլուն ի մէջ մրդկն տեսանել զմդկան զբարի եւ զշար եւ յանկանել զաշխարհիս դորձն:

Պիթագոր ասաց. իցէ^o արդեաւք սիրելոյ այլ ոք ես (°), քան թէ ինքն:

8. էջ 176 ր—180 ր. Արիստոտէլի Յաղագս առաքինութեց առ Աղեկս թգ:

Սկիզբն է (էջ 176 ա). Գովելի են զեղեցիքն եւ պարսաւելի գարշելիքն. քանզի բարեցացն յառաջեալ լինին առաքինութիքն եւ զարշելեացն չարութիքն:

Վերջ (էջ 180 ր). Իսկ ընթհանուր չարութեան գործ եւ յատուկ եւ հետեւութի՝ ա ասցելոցդ ներհակքն՝ որք են ի պարսաւելեացն:

Էջ 180 ր եւ 181 ա — ներքեւի լուսանցքների վրայ. Ստորոգութիք-կատարօրիսա: Յաղագս մեկնութեան — ի պեսի էոմէնիսա: Վերլուծական — անալաւտիկի: Ապացուցական — արաւդիկատիկի: Շարաբանութի — դիալեկտիկի: Ստորասութի — կատաֆուսի: Բացասութի — ապաֆասիս: Բացերեւական — ասկաֆանսէս:

9. էջ 181 ա—275 ր. Ստորթիւնք Արիտ ժ, որ կոչի յունարէն կատիլօիս:

Անթերի օրինակ Արիստոտէլի Ստորոգութեանցն մեկնութեան: Լուսանցների վրայ բացատրութիւններ նոտր գրով:

Սկիզբն է (էջ 181 ա). Հոմանունութիւննի ըստ յերկուս յեղանակս՝ ըստ պատուոյ, ըստ յեղանակի, ըստ յուսոյ, ըստ աղաւթից, ըստ կերպարանի, ըստ նմանութե եւն:

Վերջ (էջ 275 ր). Քանզի էր սահման սեռին, որդիս ասացաւ զյոլովից եւ զտարբերեցելոց տեսակաւ ի ներում զինչէն ստորոգեալ:

10. էջ 276 ա—344 ր. Սկիզբն եւ նախադրութի գրցն որ ասի ըստ Յունաց՝ Պերիարմէնիսա եւ հայերէն՝ Յաղագս մեկնութե: Արտագրեալ ի մեծ Հելենացոց իմաստասիրէն Արիստոտէլէ, թարգմանեալ եւ մեկնեալ ի Դաւթէ Փիլիսոփայէ ներգինացո:

Զեռագիրս պարունակում է նաև 1833 թուի Վենետիկի տպագիր հրատարակութեան մէջ բաց թողած մասերը: Լուսանցների վրայ բացատրութիւններ նոտր գրով եւ այլ գրչէ:

Սկիզբն է մեկնութեան (էջ 276 ա). Ճառուցաւ մեղ երբեմն, եթէ է ա բանական իրաւութես այսորիկ ակնկալութի առ ապացուցական չարաբանութիւնս հասանել: Վերջ (էջ 344 ր). Քնզի ա ուրեք սովորեաց իմաստասէրս յաղագս պիտանացուին գիտութի սերմանել իւրոց լառացն:

11. էջ 345 ա—ր. Աղիւսակ անկիւնաւոր թուերի:

¹ Հուսանցքում Փեսիգիտադայ:

Յիշատակագրութիւններ.

1. էջ 88 ա., 175 բ., 188 բ., 190 ա., 260 ա.,
332 ա նոյն գրչէ.

88 ա. զստ գծ յիշ [= պՍտեփանոս գծող
յիշեցէք] :

175 բ., 260 ա. զգծ ստ յիշ [= զգծող
Ստեփանոս յիշեցէք] :

188 բ. զստ գր յիշ [= պՍտեփանոս գրիչ
յիշեցէք] :

190 ա. զծառ ստ յիշ [= ծառայ Ստե-
փանոս յիշեցէք] :

332. զգծ ստ յիշ ի տր [= զգծող Ստե-
փանոս յիշեցէք ի Տէր] :

2. Ներսէս Շնորհալու «Ամենայն չար
տանջելի» հատուածի մեկնութեան վերջում,
նորոգուած 74 բ թրթի վրայ, նոտր գրով
տարբեր գրչէ.

Զմեղուցլ Յակոբ վղպտոս Ղրիմեցի աղա-
չէմ յիշել ի Տէր, ի թվիս ՊԾԹ [= 1410] :

3. էջ 157 բ., Պորփիւրի Ներածութեան
մեկնութեան վերջում, Ստեփանոս գրչէ.

Փառք ամենաղղաւը էին Ա. որ եւ գօրու-
թի յանդ հանել զստ:

4. Ներքեւում նոյն էջի վրայ Ստեփանոս
գրչէ. Բնական կարգն արտաքին գրենացս
այս է. նախ Քերականն եւ ապա՝ Սահմանքն
եւ Ամ չար տանջելին, ապա՝ Պորփիւրն եւ
զկնի՝ Ստորոգութիքն եւ ապա՝ Պերիար-
մէնիասն եւ ապա՝ Աշխարհացն եւ զկնի՝
Առաքինութեցն: Իսկ աստ որ զհետ Պոր-
փիւրիս Աշխարհացս է եւ Առաքինութեցս
կամ ի տպիտութենէ է կամ յաւրինակէն եւ
կամ յերկուցն:

5. էջ 175 բ., «Ստաղիրացէ էր եւն» հա-
տուածից յետոյ, նոյն գրչէ.

Զմոլորեալս յամենայնի եւ զանպիտանս
բնաւից յերեսս անկեալ աղաչէմ յիշել ի մա-
քուր յաղաւթս ձեր եւ...

6. էջ 275 բ—276 ա., ներքեւի լուսանցք-
ների վրայ, նոյն գրչէ.

Յայտաւուր զփախուստ առեալ Դողա-
երկիրս կիլիկոց յանաւրէն բոնակալէն իս-
մաէլոց, թւ ի Զին:

7. էջ 275 բ., Ստորոգութեանց մեկնու-
թեան վերջում, նոյն գրչէ՝ ԶՍտեփի... վ. ին
որ կորուսի զհայրինին ո... քի նոյն փառս
...ին հայցեմ ժտել թաղծեալս անծին...
մաքրել զմեղաց (ս)պին դառնալ յեղեմ մեզ

վերստին... ընդ ձեզ իր... ակ անձին զփառս
յանվախճան յաւիտեան. թւ Զին:

Գրերը տեղ տեղ աւրուած. խոչորացոյցի
օղնութեամբ անզտոմ չյաջողուեց ինձ վերա-
կանզնել բնագիրը:

8. էջ 322 ա., ներքեւի լուսանցքի վրայ,
նոտր գրով օտար գրչէ. Ո՞վ եղայր, աստից
ի հետ բանքս նուրբ են եւ տեսութիքս
դժուարք եւ խրթինք. ի լուսանց գրոցս ոչ
կարացի գրել լուծումն. դու լաւ հասկացո-
ղութբ կարդա:

Լուսանցքների վրայ ծանօթութիւններն
ու մեկնութիւնները գրուած են նոյն գրչէ:

9. էջ 344 բ., Ազրի էրացուած երկի մեկ-
նութեան վերջում, Ստեփանոս գրչէ.

Աւրհնեալ է Քո լոյսն Հայրական եւ փա-
ռաւորեալ է սր գալուստ նորայ որ իւրով
գալստեամբ երաց մեզ դուռն կենաց եւ ա-
ռաջնորդեաց մեզ քաղցրուսոյց վղթբ իւրով
զմանապարհն փրկութե ոգոց մերոց որ թէ-
պէտ քրտամբք եւ վաստակաւք հրամակաց
Տըն մեր մեզ ջանալ յայսմ աշխարհի, այլ
վս առաւել փառացն է այն եւ ի պսակացն
է զի ի մարմնեղէն եւ ի ծովածուփ հոգոց
վերացուցէ զմիտս մեր. մի՛ եւս բեւեռել ի
սայ եւ մի՛ ի սէր սորայ եւ մի՛ յուսումն սո-
րայ մա... կենս ինքն լինելով մեզ աւրինակ-
րարի յամենայնի զի (°):

11. էջ 345 բ., ձեռագրի վերջում, նոյն
գրչէ Կիսաւոր յիշատակարան. Յիշատակա-
րան գրոցս. Մշտապայծառ եռաջահեան հա-
մարնութե եւ եղական լոյսոյն անսկիզբն եւ
անկատարած գերաբնաբար բարոյն, այնմ
որ ի բնաւից եղելութե առ յինքենէ յանմար-
մին իմանալեաց հոգեղինացն եւ նիւթական
մահկանացու հողեղինաց միշտ եւ յարաւամ
նորա աւրհնութի վերառաքի փառք եւ պա-
տիւ եւ գոհութի եւ երկրագութի այժմ
եւ...:

Արդ ես սուտանուն քհ ըստ մանկա-
կան անհաստատ յածման խորհրդոց ըմբռ-
նեցա ի սէր այսմ անպէտ եւ պիտանի գրոցս:
Ապա թէ ըստ տեսութեց իւրոց անաւգուր-
թւի այլ յածմայինս աւգտակար: Այլ պղա-
չէմ զձեզ սր հարք եւ եղբարք, որք աւգտէր
ինչ ի սմանէ կարդալով կ յաւրինակ՝ մի՛
ի գերեւ համարել բազում աշխատութե ին
ի սմայ: Այլ ըստ ընդարբոյս բարի բարուց
ձերոց յիշատակի առնել արժանի զրիւր պար-
տուց պարտականս տէրունի:

Գրքի վերջում՝

- Էջ ա. 1. [մի] լսովն կանդնեսցին։ Եւ որք
ի հաւ
2. [ատ] ոց ցրտացեալք՝ զայս եր-
կուս աւան
3. [դ] ութիւնս մտաւք վերարկես-
ցն, եթե
4. [ա] ծեղէն սիրովն ջեռնուն։
5. [ի] սկ աշակերտացն երկուս,
վասն զի
6. [բ] ազում ունելով Յի զաշակերտ-
ուն, զվերին
7. [ա] շտիճանեան երկնագուպար
պարսն՝
8. զոր մեծն զաւզոս շարադասէ.
Հրեշտակք
9. Եւ հրեշտակապետք, աթոռք եւ
տրութիւնք
10. պետութիւնք եւ իշխանութիւնք,
ուն
11. բովէք եւ քերովբէք։

- Էջ բ. 1. նից ի սբովքեական ի կառս։
2. Զորձս իմանալի է զմաքուր վար-
դապ[ետ]
3. ութիւնս առաքելոցն. զի անդ ի
սրով[վր]
4. ևական սրբարանութիւնսն նստի
ե[ւ]
5. հանդչի, իսկ աստ յառաքելական
քար[ող]
6. ութեան նստի եւ բազում հրաշ-
կատա[րէ],

¹ Հմմա. Մամբրէի վերծանողի ճառք, Վենետիկ 1894. ի մեջի աւուր գալստեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի յերուսաղէմ, էջ 61. «Եւ դարձեալ՝ եթէ միովն
դայթակղացի ոք, մուսավի կանգնեսցի. Եւ ի հաւատոց ցրտացեալքն զայս երկուս աւ անդութիւնս մոօք վերար-
կեցն, եւ աստուածոցին ջեռնուն սիրովն։ Իսկ յաշ-
կերտացն երկուս, գասն զի բազում ունելով Յիսուսի զա-
շակերտսն, զվերին ութաշահճանեայ երկնագումար զպար-
ուն՝ զոր մեծն զաւզոս շարադասէ. Հրեշտակք, հրեշտա-
կապետք, աժոռք, տերութիւնք, պետութիւնք, իշխա-
նութիւնք, սերովքեք, քերովբէք։»

² Հմմա. Եղանը, էջ 63. «Իսկ ձորձոցն վերարկեցելց
ի նոյն կենդանատեսակացն» յորոց վերաց նստի նստեան
ճշմարտապէս յերկինս երկնից ի բրոգեական կառսն։
Զորձս իմանալի է զատքելական վարդապետութիւնն. զի
անդ ի սրբութեական սրբութեանն նստի եւ հանգչի, իսկ
աստ յառաքելական քարոզութեանն նստի եւ բազում
հրաշակերտէ, եւ զերասանակ վարդապետութեանն ուղղէ
յերկինս երկնից ափրապէս։ Արդ հասարակաբար նստա-
միաձնն յերկինս ի վերոյ քերովքեից, եւ յերկին ի նուս
կենդանեաց։»

7. եւ զերասանակ վարդապէտու-
թեան ու [զզէ]
8. յերկին երկնից տիրապէս։
9. Արդ հասարակաբար նստի միա-
ձին
10. յերկին ի վերայ քերովքեից, եւ
ի յերկ։

(Ծարունակելի):

ՊՐՈՓ. Յ. ՄԱՆԱԴԵՅԻՆ



ԴԻՑԱՐԱՆԱԿԱՆ

ՄԻՀՐԻ ՀԱՅՈՅ ՄԻՀՐԻ ՄԻՀՐԻ

(Ծարունակութիւն:)

Դ.

ՄԻՀՐԻ ՀԱՅԵՍԱԼԻ-ՑԲ

1.

Թէ Միհրի հաւատալիքն ինչ թանձրա-
ցեալ բնոյթ է ունեցել Հայաստանում, այս
մասին մենք մատենագրական ուղղակի տե-
ղեկութիւններ չունենք։ Մի մօտաւոր գաղա-
փար կաղմելու համար մնում է դիմել մեր
հարեւան ժողովրդին — պարսիկներին՝ են-
թագրելով, թէ այն հաւատալիքը, որ կար
Պարսկաստանում Միթրայի մասին, ընդ-
հանուր գծերով հաւանօրէն գոյութիւն է
ունեցել նաեւ Հայաստանում Միհրի մասին։
Ի՞նչ էր իրանական Միթրան։

Պարսից երկարմատ կրօնի ուսմունքի
համաձայն մի բարի աստուած, որ սկզբում
երկրորդական զեր ունէր, բայց հետզհետէ
մեծացաւ, բոնեց առաջնակարգ տեղ՝ նսե-
մացնելով նախկին մեծարուածներին։ Մի-
թրան լոյսի, արեւի ու կրակի աստուածն
էր։ Նա մարտնչում էր Ահրիմանի ու սրա
դործակիցների, վիշապների ու զեւերի դէմ։
Սակայն Միթրայի հաւատալիքի գլխաւոր
յատկանիշը ոչ թէ նրա բարի Աստուած,
արեւի ու կրակի աստուած եւ վիշապամարտ
ու զիւահալած լինելն էր, այլ այն, որ Մի-
թրան պատկերացւում էր իբրեւ մի աղա-
տաբար մարտիկ, որ դարերի վերջում զալու
է մարդկութիւնը չարութեան աստծուց ու
սրա արբանեակներից փրկելու համար։ Մի-